8. *եւ զարդ ար եցի պէսպէս սպասիւք խաչեր*
...նոցս

9. *եկեղեցոյ Ա.յ եառւ եւ զգանձագին գեւղն*
...վաճելել

10. *այգի մի յԵրեւան եւ այգի մի ի Ն որ ա-*
չէնքն եւ ... (*Գրիգ*) *որ իսի*

11. *արհիեպիսկոպոսի առաջնորդի սբ ուխտին*
Հ ... նայր

12. *միանձնութբ վս սիրոյն Քի էր եւ սպա-*
սաւոր եղբարցս Գրիգ որ վարդապ....
(*ետ մա*) *կանուն մունունիկ*

13. *սահմանեցին միաբան եղբայրութբս* (*ա-*
ռանց պատուի) *զ աւ ազ ի որ անն հանա-*
պազ աւ ր պատարագ ի լ (s!) *ինձ եւ չա*

14. *բաթն աւրն ամ էն եկեղեցիքս որ չափ ես*
կենդանի եմ իմ ծնողացն առնեն եւ յետ
ելից իմոց

15. *յաշխարհէ ինձ առնեն անխափան եւ եթէ*
ոք խափանեսցէ յայսցանէ զատեսցի ի տէ
եւ տու

16. *ժեսցի տուգանեալ տանջմամբ յաւիտե-*
նական հրոյն իսկ կատարիչքն աւրհնեալ
լիցին յԱյ

17. *եւ յամենայն սրբոց յիշեսցին եւ ածա-*
տուրք եղբ ար քն իմ եւ զինակիցք Ջա-
ջուան եւ Գրիգ որ եւ սիրելի

18. *որ դիք իմ հարազատք Պապաքն Մքդէմ եւ*
Հասան երկանուն Պաուշ տբ պահպանեալ
եղից

19. *ին այժմ եւ յ աւ իտեանս ամ էն: Ես Մա-*
մայս աղախին Քի զուս... Վասակա զայ

20. *գին իմ որ յԵրեւան գնեցի ի հալալ ընչից*
իմոց եւ ետո ... ղեցիս որ չաբաթն

21. *աւրն : բ : խորանն ինձ լինին յութիցն*
պատարագ կամակցութբ տն իմոյ Վա-
սակա

22. *եւ մի ոք խափանեսցէ զի մի անէծս առցէ*
յԱյ եւ յամենայն սրբոց իւրոց:

ԾԱՆՕԹ.— Բազմակէտներով նշանակուած մասերը թափած են, ինչպէս պատկերից էլ ընթերցողը նկատել կարող է: Փակագծի մէջ առնուածը լրացնում ենք:

ՅԱՒԵԼՈՒԱԾ Ա. 5.
Ա. Գրքի եր. 38

ՅԱԽԱՑ ՔԱՐՈՒՄ

Կամաւն Այ ես Էաչի որդի Հասանա Թոռն Պռ
չայ միաբանեցա սբ ուխտիս Ցախաքարո
եւ ետու յիմ հայրենեաց ի Սրկղունիս զմեր
ձեռատունկ այգին նորակերտ իւր ջրովն
մեր եղբայրն տր Աւրպէլ Ովանն եւ միաբանքն
ի տարին սահմանեցին Դ պատարագ մեզ եւ
ծնողաց մերոց եւ ամուսնոյն իմոյ
Մամախաթունին ի տաւնի Դաւթի եւ Յակոբայ
կատարիչքն աւրհնին յայ Թվ. ՉԿԶ.

ԾԱՆՕԹ.— Ջալ. Բ. 163. Հասանայ, Պռօշայ միաբանեցայ, Ցախաքարոյ, Օրբէլի Օվանէի, չունի «եւ», Մամայ խաթունին ի տօնի, Յակոբայ, օրհնին. Թուականը չունի:

Ալիշան. Սիսական. 156. Հասանայ, միաբանեցայ, Ցախաքարոյ, «եղբաւրն տէր Աւրբէլի Ովանէի», սխալ ընթերցուած, «Գ» փոխ. «Դ». Մամայ խաթունին:

Ouw. *եր. 111. Եաչի, միաբանեցայ, Ցախաքարու, ի Արկղունս փոխ. ի Սրկղունս, նորակերտի, տէր Աւրպէլի Ովանէն:*

Մեր ընթերցուածները ճշդուած եւ ստուգուած են տեղում եւ լուսանկարի վերայ, որ տարաբաղդաբար կորել ենք եւ նմանահանութիւնը տալ չենք կարող:

ՅԱՒԵԼՈՒԱԾ Ա. 6.
Ա. Գրքի եր. 45. ծ.

ԿՈՐԱԴԻՍ

Եկեղեցու արձանագրութիւնը.

Թվ. ռճժե չինեցօ եկեղեցիս անուն Նիկողա ոսի որ գեղով աշխատեցանք:

Գերեզմանատանը՝

ռճա թուականով խաչքարեր:

ԱՂԽԱՋ.

Գերեզմանատանը,

1. *Մի քար՝ Թվ. ջկդ* (1515) *կանկնեցաւ խաչս բրիս Միրզին* (Մ*ի րզին ? փակագրով է*):
2. *Մի ուրիշ քար. Ես Նիկիղոս կանգնեցի խաչս.. տրոսին* (*Պետրոսին* ?) *եւ հոգոյ իմոյ Թվ. ռե* (1556):
3. *Ես Թում* (*ի*)/*կս կանկն/եցի խաչս/ Միրի-ճանին Թվ. ռիդ* (1575)
4. *Մի գերեզմանաքար քանդակներով. Թվ. ռկե* (1616) *Աւաքին Ծահրազ». միւս երեսին «Ալահղատ»:*